

Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով Պայմանավորված Վարձավճարների Աջակցության Ծրագիր Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ) Թարմացվել է՝ 18 Օգոստոս, 2020

Վարձակալների կողմից Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ)

1. Ինչպե՞ս պետք է բնակարանի վարձակալի դիմի Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով պայմանավորված Վարձավճարի Աջակցության (Rent Relief) ծրագրից օգտվելու համար:
2. Ո՞վ է իրավասու ծրագրից օգտվելու համար:
3. Արդյո՞ք Լոս Անջելես քաղաքի բնակիչներն իրավասու են օգտվել այս ծրագրից:
4. Արդյո՞ք առևտրային նշանակության անշարժ գույքի համար իրավասու են ստանալ վարձավճարի աջակցություն:
5. Որո՞նք են COVID-19-ի պատճառով վարձը վճարելու անկարողության հանգամանքները:
6. Ինչպե՞ս հմանամ արդյո՞ք իմ եկամուտը կազմում է միջին աշխատավարձի 30%-ը:
7. Ինչպե՞ս հմանամ արդյո՞ք իմ եկամուտը կազմում է միջին աշխատավարձի 50%-ը:
8. Ինչպե՞ս են դիմողներն ընտրվելու վարձավճարի սուբսիդիա ստանալու համար:
9. Ո՞ր փոստային ինդեքսներն /zip codes/ են համարվում բարձր ռիսկային:
10. Եթե ես ստանում եմ Վարձավճարի Դաշնային Սուբսիդիա, օրինակ՝ Բաժին 8-ի համաձայն Բնակարանի Ընտրության կամ Վետերանների Հարցերով Բնակարանային Աջակցության (VASH) վաուչերը, կամ բնակվում եմ Բաժին 8-ի ծրագրի ներքո կամ պետական բնակարանում, արդյո՞ք իրավասու կլինեմ աջակցություն ստանալ Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով պայմանավորված Վարձավճարի Աջակցության ծրագրի շրջանակներում:
11. Ու՞մ է վճարվում վարձակալության սուբսիդիան:
12. Արդյո՞ք իմ անշարժ գույքի սեփականատերը պետք է որևէ բան անի վարձավճարի սուբսիդիա ստանալու համար:
13. Ինչպիսի՞ տեղեկություններ պետք է տրամադրեմ Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով Պայմանավորված Վարձավճարի Աջակցության ծրագրի շրջանակում վարձավճարի սուբսիդիա ստանալու իրավասություն ունենալու համար:
14. Եթե վարձակալն ընտրվում է վարձավճարի սուբսիդիա ստանալու համար, կարո՞ղ է արդյոք փոխհատուցում ստանալ անշարժ գույքի սեփականատիրոջն արդեն վճարած վարձի համար:
15. Իմ բնակարանում ապրում են մի քանի չափահաս անձինք: Արդյո՞ք մեզնից յուրաքանչյուրը պետք է դիմում ներկայացնի:
16. Առգանց դիմումի հասանելի՞ է այլ լեզուներով:
17. Արդյո՞ք ծրագրին դիմելու համար անհրաժեշտ է լինել ԱՄՆ քաղաքացի:
18. Կարո՞ղ եմ դիմում ներկայացնել այս պահին:
19. Արդյո՞ք անշարժ գույքի սեփականատերը կհարկվի վարձավճարի համար սուբսիդիա ստանալու դեպքում:
20. Որպես վարձակալ՝ արդյո՞ք ես պետք է չվճարեմ վարձավճարը, որպեսզի իրավասու լինեմ օգտվել ծրագրից:

Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով Պայմանավորված Վարձավճարների Աջակցության Ծրագիր Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ) Թարմացվել է՝ 18 Օգոստոս, 2020

21. Արդյո՞ք մարդիկ, ովքեր ունեն շարժական տներ, բայց տարածքի վարձ են վճարում տանտիրոջը, իրավասու են դիմել:
22. Արդյո՞ք մարդիկ, ովքեր սենյակ են վարձակալում, իրավասու են դիմել:

Անշարժ Գույքի Սեփականատերերի կողմից Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ)

1. Կարո՞ղ եմ իմ վարձակալի անունից դիմել վարձավճարի սուբսիդիա ստանալու համար:
2. Կարո՞ղ եմ օգտագործել վարձավճարի սուբսիդավորման գումարը չվճարված վարձի կամ պարտքերի վճարման համար:
3. Արդյո՞ք վարձավճարի սուբսիդիան կծածկի նաև ուշացրած վարձավճարները կամ այլ վճարները:
4. Արդյո՞ք իմ վարձակալը կստանա վարձավճարի սուբսիդիա:
5. Արդյո՞ք ես կստանամ 1099:
6. Արդյո՞ք ինձնից կպահանջվի տրամադրել W-9:
7. Որո՞նք են ծրագրի պայմանները, որոնց պետք է համաձայնվի անշարժ գույքի սեփականատերը:
8. Արդյո՞ք գումարը կստանամ միանվագ վճարման, թե ամսական վճարումների տեսքով:

Վարձակալների կողմից Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ)

1. **Ինչպե՞ս պետք է բնակարանի վարձակալը դիմի Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով պայմանավորված Վարձավճարի Աջակցության (Rent Relief) ծրագրից օգտվելու համար:**

Վարձակալը պետք է լրացնի առցանց դիմում աայտել՝ <https://211la.org/lacounty/rentrelief>: Դիմումներն ընդունվելու են Երկուշաբթի օրը՝ Օգոստոսի 17-ից սկսած մինչև Երկուշաբթի՝ Օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում: Եթե վարձակալը չունի հասանելի համակարգիչ, ապա նա կարող է զանգահարել 2-1-1, և ներկայացուցիչը վարձակալի անունից կարող է լրացնել դիմումը: Դիմումների ընդունման ժամանակաշրջանում Թեժ գիծը հասանելի կլինի ամեն օր՝ առավատոյան ժամը 8:00-ից մինչև երեկոյան ժամը 8:00-ը, և կլինեն ներկայացուցիչներ տարբեր լեզուներով աջակցություն տրամադրելու համար:
2. **Ո՞վ է իրավասու ծրագրից օգտվելու համար**

Օժանդակություն կտրամադրվի եկամուտ ունեցող իրավասու տնային տնտեսություններին, որոնք ֆինանսավորվում են COVID-19 համաճարակով, սահմանափակված են:

Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով Պայմանավորված Վարձավճարների Աջակցության Ծրագիր Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ) Թարմացվել է՝ 18 Օգոստոս, 2020

- Նրանք, ովքեր տվյալ պահին ստանում են միջին աշխատավարձի 30%-ի չափով եկամուտ, կարող են ստանալ մինչև \$10,000-ի չափով աջակցություն:
- Նրանք, ովքեր տվյալ պահին ստանում են միջին աշխատավարձի 50%-ի չափով եկամուտ, կարող են ստանալ մինչև \$7,500-ի չափով աջակցություն:

3. Արդյո՞ք Լոս Անջելես քաղաքի բնակիչներն իրավասու են օգտվել այս ծրագրից:

Լոս Անջելես քաղաքի բնակիչներն իրավասու չեն օգտվել այս ծրագրից: Աղբյուրների համար խնդրում ենք դիմել MyLA311-ին՝ զանգահարելով 311 կամ (213) 473-3231 հեռախոսահամարներով, կամ այցելելով www.lacity.org/myla311 :

4. Արդյո՞ք առևտրային նշանակության անշարժ գույքի համար իրավասու են ստանալ վարձավճարի աջակցություն:

Ո՛չ, առևտրային նշանակության անշարժ գույքի դեպքում Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով պայմանավորված Վարձավճարների Աջակցություն ստանալու իրավասություն չի գործում: Այս ծրագիրը նախատեսված է միայն բնակելի անշարժ գույքերի համար:

Բիզնես աջակցության համար, խնդրում ենք կապ հաստատել Լոս Անջելեսի Շրջանի Աղետների Օգնության Կենտրոնի հետ՝ զանգահարելով (833) 238-4450 հեռախոսահամարով կամ այցելելով lacountyhelpcenter.org:

5. Որո՞նք են COVID-19-ի պատճառով վարձը վճարելու անկարողության հանգամանքները:

- Եկամտի կորուստը՝ աշխատավայրի փակման կամ աշխատաժամերի կրճատման հետևանքով:
- Եկամտի կորուստը, կամ երեխաների խնամքի ծախսերի աճը ցերեկային խնամքի հաստատությունների կամ դպրոցների փակման հետևանքով:
- Բժշկական ծախսերը ձեր կամ ընտանիքի անդամներից մեկի համար, ով հիվանդ է COVID-19-ով:
- Եկամտի կորուստը կառավարության կողմից 2020 թվականի մարտի 13-ի հրամանի համաձայն արտակարգ միջոցառումների իրականացման հետևանքով:

6. Ինչպե՞ս իմանամ՝ արդյո՞ք իմ եկամուտը կազմում է միջին աշխատավարձի 30%-ը:

Եթե ձեր ընտանիքի ընդհանուր եկամուտը՝ ներառյալ տանը բնակվող բոլոր չափահաս անձանց՝ 18 տարեկանից բարձր կամ ավելի բարձր տարիքի

**Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով Պայմանավորված
Վարձավճարների Աջակցության Ծրագիր
Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ)
Թարմացվել է՝ 18 Օգոստոս, 2020**

անձանց եկամուտը, դուրսարային քանակով ավելի քիչ է ստորև աղյուսակում նշված քանակից, ապա դուք կարող եք որակավորվել օգնություն ստանալու համար:

Ընտանիքում Անձանց Թիվը	1 Անձ	2 Անձ	3 Անձ	4 Անձ	5 Անձ	6 Անձ	7 Անձ	8 Անձ
Եկամուտը	\$23,700	\$27,050	\$30,450	\$33,800	\$36,550	\$39,250	\$41,950	\$44,650

7. Ինչպե՞ս իմանամ՝ արդյո՞ք իմ եկամուտը կազմում է միջին աշխատավարձի 50%-ը:

Եթե ձեր ընտանիքի ընդհանուր եկամուտը՝ ներառյալ տանը բնակվող բոլոր չափահաս անձանց՝ 18 տարեկանից բարձր կամ ավելի բարձր տարիքի անձանց եկամուտը, դուրսարային քանակով ավելի քիչ է ստորև աղյուսակում նշված քանակից, ապա դուք կարող եք որակավորվել օգնություն ստանալու համար:

Ընտանիքում Անձանց Թիվը	1 Անձ	2 Անձ	3 Անձ	4 Անձ	5 Անձ	6 Անձ	7 Անձ	8 Անձ
Եկամուտը	\$39,450	\$45,050	\$50,700	\$56,300	\$60,850	\$65,350	\$69,850	\$74,350

8. Ինչպե՞ս են դիմողներն ընտրվելու վարձավճարի սուբսիդիա ստանալու համար:

Այն բնակիչները, որոնք բնակվում են վտարման համար բարձր ռիսկային փոստային ինդեքսների գոտիում և սոցիալ-տնտեսական այլ խոցելի տարածքում, արագ կերպով կհայտնաբերվեն և օգնություն կստանան այն դեպքում, եթե նրանց եկամուտը կազմում է միջին եկամտի 50%-ը: Ֆինանսավորման մոտավորապես 50% -ը կտրամադրվի այդ պահանջները բավարարող դիմորդներին՝ որպես արագ աջակցություն:

Բոլոր մյուս տարածքների համար, որոնք չեն համարվում վտարման համար բարձր ռիսկային փոստային ինդեքսների գոտի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական այլ խոցելի տարածքների համար վարձակալները, որոնց եկամուտը կազմում է միջին եկամտի 50%-ը կամ ավելի ցածր, կկարողանան դիմել և իրենց փոստային ինդեքսի հիման վրա կնշանակվեն Ծառայությունների Ծրագրավորման Տարածքում (SPA): Կկիրառվի Դաշնային Համայնքի Չարգացման Բաժնի Նպաստների Ծրագրի (Federal Community Development Block Grant Program) համար օգտագործված բանաձևը, որը հաշվի է առնում բնակչության, աղքատության և գերբնակեցված

Լուս Անջելեսի Շրջանում COVID-19-ով Պայմանավորված Վարձավճարների Աջակցության Ծրագիր Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ) Թարմացվել է՝ 18 Օգոստոս, 2020

բնակարանների խնդիրը, SPA-ի միջոցով հասանելի ֆինանսավորման մնացած 50% -ը հատկացնելու համար: Դիմումների ընդունման գործընթացի ավարտին կանցկացվի իրավասու դիմորդների վիճակախաղ:

9. Ո՞ր փոստային ինդեքսներն /zip codes/ են համարվում բարձր ռիսկային:

Խնդրում ենք [սեղմել այստեղ](#)՝ տեսնելու համար բարձր ռիսկային համարվող փոստային ինդեքսների ցանկը:

10. Եթե ես ստանում եմ Վարձավճարի Դաշնային Սուբսիդիա, օրինակ՝ Բաժին 8-ի համաձայն Բնակարանի Ընտրության կամ Վետերանների Հարցերով Բնակարանային Աջակցության (VASH) վաուչերը, կամ բնակվում եմ Բաժին 8-ի ծրագրի ներքո կամ պետական բնակարանում, արդյո՞ք իրավասու կլինեմ աջակցություն ստանալ Լուս Անջելեսի Շրջանում COVID-19-ով պայմանավորված Վարձավճարի Աջակցության ծրագրի շրջանակներում:

Վարձակալները, ովքեր ստանում են Բաժին 8-ի համաձայն Բնակարանի Ընտրության կամ VASH-ի վաուչեր, կամ բնակվում են Բաժին 8-ի ծրագրի ներքո կամ պետական բնակարանում, իրավասու **չեն** մասնակցել այս ծրագրին:

11. Ու՞մ է վճարվում վարձակալության սուբսիդիան:

Վարձակալության սուբսիդիան վճարվում է անմիջապես անշարժ գույքի սեփականատիրոջը: Վարձակալության սուբսիդիան կվճարվի անշարժ գույքի սեփականատիրոջն այն դեպքում, եթե վարձակալը որակավորված լինի սուբսիդիան ստանալու համար՝ փաստաթղթերի տրամադրման միջոցով հաստատելով իրավասու լինելու փաստը, և եթե անշարժ գույքի սեփականատերը նույնպես համաձայն է մասնակցել ծրագրին:

12. Արդյո՞ք իմ անշարժ գույքի սեփականատերը պետք է որևէ բան անի վարձավճարի սուբսիդիա ստանալու համար:

Որպեսզի անշարժ գույքի սեփականատերը վարձակալության սուբսիդիա ստանա, նա պետք է համաձայնվի՝

- Չզանձել որևէ տոկոսադրույք կամ վճար վարձակալության վճարների ուշացման համար կամ պարտքի դիմաց,
- Դուրս չհանել վարձակալին Լուս Անջելեսի Շրջանի Վճարումների Ժամանակավոր Հետաձգման (Temporary Eviction Moratorium) ժամանակահատվածի ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:
- Չբարձրացնել վարձավճարը դրա մարման ժամանակաշրջանում՝ Լուս Անջելեսի Շրջանի Վճարումների Ժամանակավոր Հետաձգման ժամանակահատվածի ավարտից հետո:

**Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով Պայմանավորված
Վարձավճարների Աջակցության Ծրագիր
Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ)
Թարմացվել է՝ 18 Օգոստոս, 2020**

13. Ինչպիսի՞ տեղեկություններ պետք է տրամադրեմ Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով Պայմանավորված Վարձավճարի Աջակցության Ծրագրի շրջանակում սուբսիդավորման իրավասություն ունենալու համար:

Վարձակալը պետք է տրամադրի՝

- Վարձակալության ապացույց, ինչպիսիք են՝ վարձակալության պայմանագիրը/ համաձայնագիրը, կամ տվյալ անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից տրված ծանուցում, և այլն
- Անհրաժեշտ է լրացնել հատուկ այս ծրագրի համար մշակված ձևաթուղթը՝ բնակավայրում բնակվող 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց եկամուտը արձանագրելու համար, ինչպես նաև պարզելու, թե ինչպես է ընտանիքը տնտեսապես տուժվել COVID-19-ից, ինչն անհնարին է դարձրել վարձավճարային պարտականությունների կատարումը:

14. Եթե վարձակալն ընտրվում է վարձավճարի սուբսիդիա ստանալու համար, կարո՞ղ է արդյոք փոխհատուցում ստանալ անշարժ գույքի սեփականատիրոջն արդեն վճարած վարձի համար:

Ո՛չ, փոխհատուցում կամ գումարի վերադարձ չկա: Սուբսիդավորումը նախատեսված է վարձը վճարելու դժվարություն ունեցող անձանց համար և վերաբերելու է 2020 թվականի Մարտի 1-ից չվճարված վարձավճարների պարտականություններին կամ հետագա վարձավճարներին:

15. Իմ բնակարանում ապրում են մի քանի չափահաս անձինք: Արդյո՞ք մեզնից յուրաքանչյուրը պետք է դիմում ներկայացնի:

Ո՛չ, անշարժ գույքը վարձակալած մեկ միավոր ընտանիքից պետք է ներկայացվի միայն մեկ դիմում: Մի քանի դիմումներ ներկայացնելը կարող է դիմումը համարել ոչ իրավասու: Ձեր ընտանիքի ընդհանուր եկամուտը՝ ներառյալ բնակավայրում բնակվող բոլոր չափահաս՝ 18 տարեկանը լրացած և ավելի բարձր տարիքի անձանց եկամուտը, կօգտագործվի որոշելու ծրագրից օգտվելու ձեր իրավասության հարցը:

16. Առցանց դիմումը հասանելի՞ է այլ լեզուներով:

Այո՛, առցանց դիմումը հասանելի կլինի Իսպաներեն և Անգլերեն լեզուներով: Այլ լեզուներով աջակցություն ստանալու համար խորհուրդ ենք տալիս զանգահարել 2-1-1 հեռախոսահամարով:

17. Արդյո՞ք ծրագրին դիմելու համար անհրաժեշտ է լինել ԱՄՆ քաղաքացի:

Այս ծրագիրը հասանելի է բոլոր վարձակալների համար՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: Մենք չենք հարցնելու ձեր ներգաղթի կարգավիճակի մասին, ինչպես նաև դա անհրաժեշտ չէ իրավասությունը որոշելու համար:

**Լուս Անջելեսի Շրջանում COVID-19-ով Պայմանավորված
Վարձավճարների Աջակցության Ծրագիր
Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ)
Թարմացվել է՝ 18 Օգոստոս, 2020**

18. Կարո՞ղ եմ դիմում ներկայացնել այս պահին

Առցանց դիմումը հասանելի կլինի 2020 թվականի Օգոստոսի 17-ից Օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ ցանկացած ժամանակ: Հեռախոսագիծը հասանելի կլինի շաբաթական 7 օր՝ առավոտյան ժամը 8:00-ից երեկոյան ժամը 8:00-ը:

19. Արդյո՞ք անշարժ գույքի սեփականատերը կհարկվի վարձավճարի համար սուբսիդիա ստանալու դեպքում:

Այո, այնպես, ինչպես մշտապես հարկվել է իր վարձավճարի եկամտի համար: Անշարժ գույքի սեփականատերերից պահանջվում է ներկայացնել IRS-1099 ձևաթուղթ:

20. Որպես վարձակալ՝ արդյո՞ք ես պետք է չվճարեմ վարձավճարը, որպեսզի իրավասու լինեմ ծրագրից օգտվել:

Ո՛չ, վարձակալը չպետք է ուշացնի վճարումը, բայց պետք է COVID-19-ի հետևանքով եկամտի նվազում ունենա և համապատասխանի ընտանիքի եկամտի իրավասության պահանջներին:

21. Արդյո՞ք մարդիկ, ովքեր ունեն շարժական տներ, բայց տարածքի վարձ են վճարում տանտիրոջը, իրավասու են դիմել:

Այո, եթե նրանք կարող են տրամադրել գույքի սեփականատիրոջ կողմից տրված վարձակալության պայմանագիր և սեփականության իրավունքը հաստատված է:

22. Արդյո՞ք մարդիկ, ովքեր սենյակ են վարձակալում, իրավասու են դիմել:

Այո, եթե նրանք կարող են տրամադրել սենյակի սեփականատիրոջ կողմից տրված վարձակալության պայմանագիր: Սա նույն կարգավորումը չէ, ինչպես մի խումբ անհատների, որպես սենյակակիցներ, ովքեր կիսում են բնակարան կամ տուն մեկ վարձող / վարձակալության պայմանագրով: Այս դեպքում, մեզ անհրաժեշտ է հաշվի առնել 18 և ավելի տարեկան բոլոր բնակիչների եկամուտը:

Անշարժ Գույքի Սեփականատերերի կողմից Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ)

1. Կարո՞ղ եմ իմ վարձակալի անունից դիմել վարձավճարի սուբսիդիա ստանալու համար:

Ո՛չ, վարձակալը պետք է որակավորվի ծրագրից օգտվելու համար՝ իր ընտանիքի կառուցվածքի և եկամտի հիման վրա: Սակայն, մենք բնակավայրերի հետ կիսվել ենք ծրագրի վերաբերյալ տեղեկություններով, և

Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով Պայմանավորված Վարձավճարների Աջակցության Ծրագիր Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ) Թարմացվել է՝ 18 Օգոստոս, 2020

անշարժ գույքի սեփականատերերին խորհուրդ ենք տալիս ուղղորդել իրենց վարձակալներին դիմել ծրագրից օգտվելու համար:

2. **Կարո՞ղ եմ օգտագործել վարձավճարի սուբսիդավորման գումարը չվճարված վարձի կամ պարտքերի վճարման համար:**

Անշարժ գույքի սեփականատերերը կծանուցվեն այն մասին, որ իրենց վարձակալները հաստատվել են ծրագրից օգտվելու համար, ինչպես նաև այն մասին, թե կոնկրետ որ ամիսների համար են ստանալու սուբսիդիա:

3. **Արդյո՞ք վարձավճարի սուբսիդիան կծածկի նաև ուշացրած վարձավճարները կամ այլ վճարները:**

Ո՛չ, անշարժ գույքի սեփականատերը պետք է համաձայնվի հրաժարվել բոլոր ուշացրած վարձավճարներից, տոկոսներից կամ այլ վարձերից: Անշարժ գույքի սեփականատերերը պետք է տեղյակ լինեն COVID-19-ի հետևանքով արտակարգ դրության ժամանակ վարձատուների պաշտպանության մասին, որոնք արգելում են պահանջել վճարել COVID-19-ի պատճառով կուտակված տոկոսադրույքները կամ ուշացրած վարձավճարները:

4. **Արդյո՞ք իմ վարձակալը կստանա վարձավճարի սուբսիդիա**

Ո՛չ, վարձակալության համար սուբսիդիան կվճարվի անմիջապես անշարժ գույքի սեփականատիրոջը՝ անմիջական դեպոզիտի միջոցով:

5. **Արդյո՞ք ես կստանամ 1099:**

Այո՛, IRS կանոնների համաձայն վարձավճարի սուբսիդիայի վճարման համար պահանջվելու է 1099-ի տրամադրում:

6. **Արդյո՞ք ինձնից կպահանջվի տրամադրել W-9:**

Այո՛, անշարժ գույքի սեփականատերը պետք է տրամադրի W-9:

7. **Որո՞նք են ծրագրի պայմանները, որոնց պետք է համաձայնվի անշարժ գույքի սեփականատերը**

Անշարժ գույքի սեփականատերերը պետք է համաձայնվեն՝

- Չգանձել որևէ տոկոսադրույք կամ վճար վարձակալության վճարների ուշացման համար կամ պարտքի դիմաց,
- Դուրս չհանել վարձակալին Լոս Անջելեսի Շրջանի Վճարումների Ժամանակավոր Հետաձգման (Temporary Eviction Moratorium) ժամանակահատվածի ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:
- Չբարձրացնել վարձավճարը դրա մարման ժամանակաշրջանում՝ Լոս Անջելեսի Շրջանի Վճարումների Ժամանակավոր Հետաձգման ժամանակահատվածի ավարտից հետո:

**Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ով Պայմանավորված
Վարձավճարների Աջակցության Ծրագիր
Հաճախ Տրվող Հարցեր (ՀՏՀ)
Թարմացվել է՝ 18 Օգոստոս, 2020**

8. Արդյո՞ք գումարը կստանամ միանվագ վճարման, թե ամսական վճարումների տեսքով

Անշարժ գույքի սեփականատերը կստանա միանվագ վճարում: